ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 26 հունվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Շավարշ Մկրտչյանի եւ այլոց
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Շավարշ Մկրտչյանը եւ այլոք 17.01.2012թ. (Մտից 4-6) դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը, ՀՀ վճռաբեկ եւ վարչական դատարանների կողմից իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, որով նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերը գրավոր ընթացակարգով քննելու դրույթը կիրառվում է որպես առանց հրապարակային դատաքննության վեճը լուծող դատական ակտի հրապարակման հնարավորություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Դիմողների կարծիքով՝ վիճարկվող նորմի այնպիսի մեկնաբանության կիրառումը, որով վարչական դատարանի համար հնարավորություն է ստեղծվում նորմատիվ ակտերի վիճարկման գործերը գրավոր ընթացակարգով քննելու պատրվակով դրանք քննել առանց

հրապարակային դատաքննության, հակասում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածին, խախտում է այդ հոդվածներով երաշխավորված՝ գործին մասնակցող անձանց իրավունքները:

Դիմողները կարծում են, որ հրապարակայնության սկզբունքը չի նույնանում գործը բանավոր կամ գրավոր ընթացակարգով քննելու հետ, մասնավորապես, գործը կարող է բանավորությամբ քննվել դռնփակ, որը բանավորության պահանջի պահպանում կլինի, բայց հրապարակայնության սկզբունքի խախտում, եթե առկա չեն ՀՀ Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով սահմանված՝ դռնփակության հիմքերը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ դիմողները 17.08.2010թ. (Մտից 4-225) դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ ի թիվս այլնի, վիճարկելով նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի սահմանադրականությունը, որի մասով, սակայն, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը 06.09.2010թ. ՍԴԿՈ/1-25 որոշմամբ մերժել է գործի քննությունը՝ դիմողների կողմից հիշյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց բարձրացնելու հիմնավորմամբ:

Խնդրո առարկա անհատական դիմումի (Մտից 4-6) նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին.
- դիմողներն իրավասու են դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողներն սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դիմողները համապատասխան հիմնավորումներով միջնորդություն են ներկայացրել պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 69-րդ հոդվածներով եւ ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Շավարշ Մկրտչյանի եւ այլոց անհատական դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Դիմողներին ազատել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հունվարի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-3